ԴԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԴԻՏԱԺՈՂՈՎ

Հայաստանի կոմկուսի Երևանի քաղկոմի, ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի ՍՍՀՄ ԳԱ հիմնական ֆոնդերի, կապիտալ ներդրումների և նոր տեխնիկայի արդյունավետության պրոբլեմային գիտխորհրդի հայկական մասնաճյուղի և Հայաստանի դիտատեխնիկական ընկերությունների հանրապետական խորհրդի նախաձեռնությամբ սույն թվականի ապրիլի 25—26-ը Երևանում անցկացվեց դիտաժողով, նվիրված ՍՍՀՄ արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումների և հիմնական ֆոնդերի տնտեսական արդյունավետության հարցերին։ Դիտաժողովի աշխատանքներին մասնակցում էին էկոնոմիկայի հարցերով զբաղվող Հայաստանի գիտահետազոտական հիմնարկների, բուհերի, պլանավորող կազմակերպությունների, արտադրական ձեռնարկությունների և այլ կազմակերպությունների, ինչպես նաև Մոսկվայի, Լենինգրադի, Ալմա-Աթայի, Դուշանբեի և Միության այլ քաղաքների տնտեսագիտական մտքի ներկայացուցիչներ։

Դիտաժողովի նպատակն էր, ինչպես նշեց իր ներածական խոսքում Հայաստանի կոմկուսի Երևանի քաղկոմի քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը, նախ դիտական լայն հասարակայնության և պրակտիկ աշխատողների ուշադրությունը բևեռել կապիտալ ներդրումների և հիմնական ֆոնդերի արդյունավետության հարցերի մշակման վրա, առանձնացնել այն հարցերը, որոնց լուծումը արդի պայմաններում առաջնահերթ խնդիր է։ Երկրորդ, ուժեղացնել տարբեր գիտական հիմնարկների համագործակցությունը կապիտալ ներդրումների և հիմնական ֆոնդերի տնտեսական արդյունավետության առաջնահերթ հարցերի համատեղ ուսումնասիրման գործում, և ապա գիտական բանավեճի միջոցով նպաստել կապիտալ ներդրումների և հիմնական ֆոնդերի արդյունավետության բարձրացման հանգուցային ուղիների որոշմանը։

Առաջին պլենար նիստում «Տեխնիկական առաջադիմությունը և հիմնական ֆոնդերի արդյունավետությունը» ընդարձակ զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի դիրեկտոր, ակադեմիկոս Ա. Առաքելյանը։

Դիտատեխնիկական առաջընթացի բազմակողմանի կոմպլեքսի հիմնական օղակը, նշեց զեկուցողը, հանդիսանում է մեքենաների սիստեմի զարգացումը։ Դա միաժամանակ հիմնական ֆոնդերի արդյունավետության բարձրացման վճռական գործոնն է։

Աշխատանքի արտադրողականության և նրա բնույթի արմատական փոփոխման համար անհրաժեշտ է ներկայիս երեք հանգուցային մեքենաներից անցնել չորս հանգուցային մեքենաներին, որոնցում վերջին՝ չորրորդ հանգույցը ավտոմատ զեկավարման սարքերն են և հարմարանքները։

Բացատրվում է այդ նրանով, որ ժամանակի ընթացքում տեխնիկական միջոցների կատարելագործման պրոցեսը ընդհուպ մոտեցել է իր սահմանին՝ մարդու օրգանիզմի ֆիզիկական և մտավոր հնարավորությունների սպառմանը։ Դրանից հետևում է, որ հիմնական ֆոնդերի արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է, որ դրանց ակտիվ մասը հանդես գա մեքենաների ավտոմատ սիստեմի ձևով։ Այնուհետև զեկուցողը նշում է, որ այդ խնդրի հաջող լուծման համար պետք է ուսումնասիրել իրադրությունը մեքենաշինության համապատասխան արտադրություններում։ Չնայած նրան, որ ՍՍՀՄ մեքենաշինությունը հասել է հսկայական հաջողությունների, դեռևս չի բավարարվում ժողովրդական տնտեսության պահանջները մեքենաների ավտոմատ սիստեմների գծով։

Մեքենաշինության առաջանցիկ զարգացումը հնարավորություն կտա զգալիորեն կրճատել ժողովրդական տնտեսության ճյուղերում հիմնական ֆոնդերի նորացման ժամկետները։

Զեկուցողը նշում է, որ տեխնիկական առաջընթացի համար կարևոր նշանակություն ունի արտադրության պրոցեսների քիմիացումը։ Դա արտահայտվում է ժամանակակից քիմիայի նվաճումները ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում ներդնելու միջոցով։ Այժմ արդեն քիմիայի շնորհիվ ստացված բազմաթիվ սինթետիկ նյութեր հաջողությամբ փոխարինում են մետաղնե-

ին։ Օրինակ՝ «Վոլգա» մարդատար ավտոմեքենայի ավելի քան 500 դետալ պատրաստվում է քիմիական գործարաններում։

Արտադրական պրոցեսների ավտոմատացման և քիմիացման հետ մեկտեղ գիտա-տեխնիկական առաջընթացի կարևոր բաղկացուցիչներից է երկրի համատարած էլեկտրիֆիկացումը։ Ընդ որում, ինչպես նշեց Ա. Առաքելյանը, դրա տակ հասկացվում է ոչ միայն և ոչ այնքան հիդրավլիկ և ջերմային կայանների շինարարությունը, որքան էլեկտրաէներգիայի կիրառումը անմիջապես արտադրության ընթացքում՝ տեխնոլոգիական պրոցեսները, շարժիչները և այլն։ Ակնհայտ է, որ հնարավոր չէ անվերջ կառուցել հիդրոկայաններ, սակայն տեխնոլոգիայի կատարելագործումը էլեկտրաէներգիայի օգնությամբ գործնականում անսահման է։

Զեկուցողը հանգամանորեն կանգ առավ գիտատեխնիկական առաջընթացի արագացման պրոցեսում գիտական ուսումնասիրությունների վճռական դերի վրա։ Գիտությունը գնալով ավելի է դառնում արտադրողական ուժ, քանի որ յուրաքանչյուր նոր արտադրանքում թաքնված է գիտական կոնկրետ ուսումնասիրություն, որոնում։

Գիտաժողովում բանավեճ ծավալվեց ժողովրդատնտեսական արդյունավետության ցուցանիշների շրջանակի որոշման շուրջը։ Պրոֆ. Լ. Լտինի (Մոսկվայի Պլեխանովի անվան ժողովրդական տնտեսության ինստիտուտ) կարծիքով, պետք է օգտվել ցուցանիշների սիստեմից, քանի որ մեկ ընդհանրացնող ցուցանիշը կգտնվի տարբեր ուղղությամբ ազդող գործոնների ներքո։ Զեկուցողը իր ելույթում մանրամասն կանգ առավ նաև արտադրական կարողությունների որոշման մեթոդի վրա։ Ներկայումս սխալ կերպով կարողության հաշվարկի ընթացքում ելնում են նրա յուրացման աստիճանից, այլ ոչ թե տեղակայված սարքավորման տեխնիկական բնութագրից։

Նույն տեսակետն է պաշտպանում Տ. Աշիմբաևը (Ղազախական ՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտ)։ Վերջինս առաջարկում է արտադրական կարողության հաշվարկի հիմքում դնել ոչ թե պլանային, այլ օպտիմալ ասորտիմենտը։

Հիմնական ֆոնդերի արդյունավետության ցուցանիշների և արտադրական կարողության միջև համեմատականության ապահովելու համար զեկուցողը նպատակահարմար է գտնում վերջինս հաշվարկել նաև արժեքային արտահայտությամբ, օգտվելով թողարկվող արտադրանքի միջինացված մեծածախ գներից։

Գիտաժողովի քննարկման հարցերից մեկը դարձավ կապիտալ ներդրումների արդյունավետության գնահատումը տնտեսավարման նոր սիստեմի պայմաններում։

Այդ հարցերին էր նվիրված տնտ. գիտ. դոկտոր Բ. Նղիաղարյանի զեկուցումը։ Նրա կարծիքով, անհրաժեշտ է նախ և առաջ պարզություն մտցնել կապիտալ ներդրումների հասկացության բնորոշման հարցում։ Կապիտալ ներդրումներ պետք է համարել այն ծախսումները, որոնց շնորհիվ ստացված արդյունքները ծառայում են երկար ժամանակի ընթացքում, բազմակի անգամ օգտագործելու համար։ Այն դեպքում, երբ դրանք արտադրության միջոցներ են, ենթադրվում է վերջիններիս մասնակցությունը մի շարք արտադրական ցիկլերին, իսկ եթե ոչ-արտադրական միջոցներ են, ապա ի նկատի է առնվում այն, որ դրանք կարող են օգտագործվել մեկ տարուց ավելի։ Զեկուցողն այն կարծիքին է, որ բնակչության կողմից կենցաղային օգտագործման որոշ առարկաների գնման վրա ծախսված միջոցները նույնպես պետք է դասել կապիտալ ներդրումների շարքին։

Ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումների իրացման ընթացքում հարկ է լինում ընտրություն կատարել հնարավոր մի քանի տարբերակների միջև։ Այդ դեպքում օգտվում ենք «Տիպային մեթոդիկայում» առաջադրված պայմաններից։

Զեկուցողի կարծիքով, համեմատական արդյունավետության և լրիվ կապիտալ ներդրումների արդյունավետության ցուցանիշները չի կարելի դիտել միմյանցից զատ։ Օպտիմալ տարբերակի ընտրությունը, ըստ համեմատական արդյունավետության՝ իրենից ներկայացնում է ածանցյալ ձև։ Միաժամանակ պետք է նշել, որ համեմատական արդյունավետության ցուցանիշները իրենց այժմյան տեսքով ամբողջական չեն, որքանով որ նրանցում չի երևում արտադրանքի դնի փոփոխությունը ըստ կապիտալ ներդրումների դիտարկվող տարբերակների։

Արտադրական ֆոնդերի քաղաքատնտեսական էության մասին զեկուցումով հանդես եկավ պրոֆ. Պ. Պավլովը (Լենինգրադ)։ Արտադրական ֆոնդերը սոցիալիզմի օրոք հանդիսանում են հանրային սեփականություն։ Միաժամանակ այդ նույն ֆոնդերը բաշխված են առանձին ձեռնարկությունների միջև տնտհաշվարկային հիմունքներով։

Զեկուցողի կարծիքով արտադրական ֆոնդերը ունեն ապրանքային բնույթ, քանի որ արտադրության պրոցեսում և արժեքի ստեղծման ընթացքում հանդես են գալիս որպես ապրանքներ։ Խոսելով ֆոնդահատույցի փոփոխման օրինաչափությունների մասին, Պ. Պավլովը նշում է, որ անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել արտադրական ֆոնդերի օրգանական կազմի դինամի-

կան։ Դա պայմանավորված է նրանով, որ տեխնիկական առաջընթացը բերում է հիմնական ֆոնդերի առաջանցիկ աճին՝ շրջանառու ֆոնդերի համեմատությամբ։ Սակայն, ֆոնդահատույցը կրարձրանա այն դեպքում, երբ հիմնական ֆոնդերի միավորին՝ բաժին ընկնի ավելի շատ շրջանառու, ֆոնդեր։

Մտքերի աշխույժ փոխանակություն ծավալվեց հիմնական ֆոնդերի արդյունավետության բարձրացման համար արտադրության տարբեր օղակներում ճիշտ համամասնությունների պահպանման հարցի շուրջը։ Հանդես եկող ընկերները (Տ. Աշիմբաե, Ա. Հարությունյան) նշեցին, որ հիմնական ֆոնդերի առանձին մասերի վերարտադրության միջև համամասնությունները կարելի է պահպանել պլանավորման հաշվեկշռային մեթոդի օգնությամբ։

Գիտաժողովում զեկուցումներ կարդացվեցին նաև արտադրության կազմակերպման ձևերի կատարելագործման (Լ. Վարդանյան), կապիտալ ներդրումների արդյունավետության վրա գների աշխարհագրության ազդեցության (Վ. Տորրին), Հայաստանի արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումների փաստացի արդյունավետության (Վ. Անդրիասյան) և քննարկվող պրոբլեմի հետ առնչվող այլ հարցերի մասին։

Վերջում գիտաժողովը քննարկված հարցերի վերաբերյալ ընդունեց կոնկրետ հանձնարարականներ։

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Ապրիլի 23—24-ին տեղի ունեցավ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների և ասպիրանտների գիտական նստաշրջան՝ նվիրված հայ գրականության պատմության ու տեսության տարբեր հարցերի։

Ինստիտուտի դիրեկտոր Վ. Նալբանդյանի բացման խոսքից հետո լսվեցին մի շարք զեկուցումներ։ «Թումանյանի ստեղծագործական մտածողության հարցերից» թեմայով հանդես եկավ ինստիտուտի տեքստաբանության բաժնի ասպիրանտ Ջ. Ավետիսյանը, որին հաջորդեց հայ հին գրականության բաժնի գիտաշխատող Վ. Ներսիսյանի «Այլաբանությունը միջնադարի հայ տաղերգության մեջ» զեկուցումը։

Ապա լսվեցին նույն բաժնի ասպիրանտներ Կ. Մուրադյանի «Բարսեղ Կեսարացու «Վարք»-ի հայերեն գրչագիր խմբագրությունները» և Հ. Սիմոնյանի «Պղնձե քաղաքի պատմության» հայերեն թարգմանությունը և նրա բնագրային կաֆաները» զեկուցումները։

«Պատմվածքի ժանրային բնույթի ըմբռնումները ժամանակակից գրականության մեջ» թեմային էր նվիրված գրականության տեսության բաժնի գիտաշխատող Լ. Ղազարյանի զեկուցումը։

Նստաշրջանի մասնակիցները մեծ հետաքրքրությամբ լսեցին գրականության տեսության բաժնի գիտաշխատող Ն. Ադալյանի «Սովետահայ բալլադը» և տեքստաբանության բաժնի գիտաշխատող Ա. Ջարենցի «Եղիշե Չարենցի մի անավարտ պոեմի մասին» զեկուցումները։

Հայ նոր գրականության բաժնից զեկուցումներ կարդացին Լ. Դավթյանը՝ «Լևոն Մանվելյանի պոեզիան», Վ. Կիրակոսյանը՝ «Ինտրայի ստեղծագործությունը» և Ն. Անանյանը՝ «Արևմտահայ սենտիմենտալ վիպագրությունը 50—60-ական թվականներին» թեմաներով։

Սովետահայ գրականության բաժնի երիտասարդ գիտաշխատող Վ. Գրիգորյանի թեման էր «Սովետահայ դրամատուրգիայի սկզբնավորումը», իսկ «Սովետական երիտասարդական արդի պոեզիայի մի քանի հարցերին» էր նվիրված Ֆ. Մելոյանի զեկուցումը։ Եվ, վերջապես, գրական կապերի բաժնի գիտաշխատող Վ. Փարթամյանը կարդաց «Հայ գրականությունը անգլերեն լեզվով հրատարակված պարբերականներում» զեկուցումը։

Երիտասարդ գիտաշխատողների և ասպիրանտների զեկուցումների շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Սարինյանը, բանասիրական գիտությունների թեկնածուներ Մ. Նահապետյանը և Ա. Ջաքարյանը։